Գլխավոր տեղեկություն	
Համար	N 1231-Ն
Տիպ	Որոշում
Ակտի տիպ	Պաշտոնական Ինկորպորացիա (24.09.2023-մինչ օրս)
Կարգավիճակ	Գործում է
Սկզբնաղբյուր	ՀՀՊՏ 2005.09.07/57(429) Հոդ.1112
Ընդունող մարմին	ՀՀ կառավարություն
Ընդունման ամսաթիվ	14.07.2005
Ստորագրող մարմին	ՀՀ վարչապետ
Ստորագրման ամսաթիվ	13.08.2005
Վավերացնող մարմին	ՀՀ Նախագահ
Վավերացման ամսաթիվ	20.08.2005
Ուժի մեջ մտնելու ամսաթիվ	17.09.2005

«Վավերացնում եմ»
Հայաստանի Հանրապետության
Նախագահ Ռ. Քոչարյան
20 օգոստոսի 2005 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 հուլիսի 2005 թվականի N 1231-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐԻ ՀԱՄԱԿԱՐԳ ՆԵՐԴՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետությունում բնակչության պետական ռեգիստրի համակարգ ներդնելու նպատակով և ի կատարումն «Բնակչության պետական ռեգիստրի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ, 5-րդ, 9-րդ, 12-րդ հոդվածների պահանջների՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ***որոշում է***.

1. Սահմանել, որ՝

ա) բնակչության կենտրոնական և տեղական ռեգիստրների վարման աշխատանքները համակարգող՝ Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից լիազորված պետական կառավարման համակարգի մարմինը Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության միգրացիայի և քաղաքացիության ծառայությունն է (այսուհետ՝ լիազորված մարմին).

բ) լիազորված մարմինը բնակչության կենտրոնական և տեղական ռեգիստրները վարում է իր ստորաբաժանումների միջոցով:

(1-ին կետը փոփ. 22.11.18 N 1308-Ն, 14.09.23 N 1576-Ն)

2. Քաղաքացիների անհատական հաշվառման տվյալները կուտակելու համար՝

ա) լիազոր մարմինը բնակչության պետական ռեգիստր է մուտքագրում՝

2006 թվականի հուլիսի 1-ի դրությամբ Հայաստանի Հանրապետությունում բնակվող Հայաստանի Հանրապետության քաղաքացիների քաղաքացիությունը հավաստող փաստաթղթի տվյալները (տեսակը, համարը, տալու ամսաթիվը, վավերականության ժամկետը և տրամադրող մարմինը), դրանում նշված քաղաքացու անունը, հայրանունը, ազգանունը, ծննդյան օրը, ամիսը, տարեթիվը, ծննդավայրը, սեռը, ինչպես նաև բնակության վայրի (կացարանի) հասցեն,

2006 թվականի հուլիսի 1-ի դրությամբ Հայաստանի Հանրապետությունում բնակվող օտարերկրյա պետությունների քաղաքացիների քաղաքացիությունը հավաստող փաստաթղթի տվյալները (տեսակը, համարը, տալու ամսաթիվը, վավերականության ժամկետը և տրամադրող մարմինը), դրանում նշված քաղաքացու անունը, հայրանունը, ազգանունը, ծննդյան օրը, ամիսը, տարեթիվը, ծննդավայրը, սեռը, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունում նրա բնակության իրավունքը հավաստող փաստաթղթի տվյալները (տեսակը, համարը, տալու ամսաթիվը, վավերականության ժամկետը և տրամադրող մարմինը), բնակության վայրի (կացարանի) հասցեն,

2006 թվականի հուլիսի 1-ից հետո Հայաստանի Հանրապետությունում բնակվող և Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստացած անձանց քաղաքացիությունը հավաստող փաստաթղթի տվյալները (տեսակը, համարը, տալու ամսաթիվը, վավերականության ժամկետը և տրամադրող մարմինը), դրանում նշված քաղաքացու անունը, հայրանունը, ազգանունը, ծննդյան օրը, ամիսը, տարեթիվը, ծննդավայրը, սեռը, ինչպես նաև բնակության վայրի (կացարանի) հասցեն,

2006 թվականի հուլիսի 1-ից հետո Հայաստանի Հանրապետությունում բնակվելու իրավունք (կացության կարգավիճակ) ստացած և Հայաստանի Հանրապետությունում բնակվող օտարերկրյա պետությունների քաղաքացիների քաղաքացիությունը հավաստող փաստաթղթի տվյալները (տեսակը, համարը, տալու ամսաթիվը, վավերականության ժամկետը և տրամադրող մարմինը), դրանում նշված քաղաքացու անունը, հայրանունը, ազգանունը, ծննդյան օրը, ամիսը, տարեթիվը, ծննդավայրը, սեռը, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունում նրա բնակության իրավունքը հավաստող փաստաթղթի տվյալները (տեսակը, համարը, տալու ամսաթիվը, վավերականության ժամկետը և տրամադրող մարմինը), ինչպես նաև բնակության վայրի (կացարանի) հասցեն,

2006 թվականի հուլիսի 1-ից հետո Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը դադարեցնելու վերաբերյալ փաստաթղթի տվյալները (տեսակը, համարը, տալու ամսաթիվը, վավերականության ժամկետը և տրամադրող մարմինը), դրանում նշված քաղաքացու անունը, հայրանունը, ազգանունը, ծննդյան օրը, ամիսը, տարեթիվը, ծննդավայրը, սեռը, ինչպես նաև բնակության վայրի (կացարանի) հասցեն,

2006 թվականի հուլիսի 1-ի դրությամբ Հայաստանի Հանրապետությունում փախստականի կարգավիճակով բնակվող անձանց կարգավիճակը հավաստող փաստաթղթի տվյալները (տեսակը, համարը, տալու ամսաթիվը, վավերականության ժամկետը և տրամադրող մարմինը), դրանում նշված քաղաքացու անունը, հայրանունը, ազգանունը, ծննդյան օրը, ամիսը, տարեթիվը, ծննդավայրը, սեռը, ինչպես նաև բնակության վայրի (կացարանի) հասցեն.

Հայաստանի Հանրապետությունում բնակվող Հայաստանի Հանրապետության երկքաղաքացիների այլ պետության քաղաքացիությունը հավաստող փաստաթղթի տվյալները (տեսակը, համարը, տալու ամսաթիվը, վավերականության ժամկետը և տրամադրող մարմինը), դրանում նշված քաղաքացու անունը, հայրանունը, ազգանունը, ծննդյան օրը, ամիսը, տարեթիվը, ծննդավայրը, սեռը, ինչպես նաև բնակության վայրի (կացարանի) հասցեն:

Հայաստանի Հանրապետության քաղաքացիների, Հայաստանի Հանրապետությունում կացության կարգավիճակ ունեցող օտարերկրյա պետությունների քաղաքացիների, Հայաստանի Հանրապետությունում մշտապես բնակվող՝ քաղաքացիություն չունեցող անձանց, Հայաստանի Հանրապետությունում փախստականի կարգավիճակով բնակվող անձանց հանրային ծառայությունների համարանիշերը, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության քաղաքացիների կենսաչափական տվյալները, եթե դրանց մշակումն ուղղակիորեն նախատեսված է օրենքով:

բ) Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությունը բնակչության պետական ռեգիստրը վարող լիազոր մարմնին է տրամադրում՝

2006 թվականի հուլիսի 1-ից հետո Հայաստանի Հանրապետության տարածքում ծնվող Հայաստանի Հանրապետության քաղաքացիների քաղաքացիությունը հավաստող փաստաթղթի տվյալները (տեսակը, համարը, տալու ամսաթիվը, վավերականության ժամկետը և տրամադրող մարմինը), դրանում նշված քաղաքացու անունը, հայրանունը, ազգանունը, ծննդյան օրը, ամիսը, տարեթիվը, ծննդավայրը, սեռը, ինչպես նաև ծնողների բնակության վայրի (կացարանի) հասցեն.

2006 թվականի հուլիսի 1-ից հետո Հայաստանի Հանրապետությունում ծնվող, Հայաստանի Հանրապետությունում բնակվող օտարերկրյա պետությունների քաղաքացիների երեխաների անձը հավաստող փաստաթղթի տվյալները (տեսակը, համարը, տալու ամսաթիվը, վավերականության ժամկետը և տրամադրող մարմինը), դրանում նշված քաղաքացու անունը, հայրանունը, ազգանունը, ծննդյան օրը, ամիսը, տարեթիվը, ծննդավայրը, սեռը, ինչպես նաև ծնողների բնակության վայրի (կացարանի) հասցեն,

2006 թվականի հուլիսի 1-ից հետո ազատազրկման դատապարտված անձանց վերաբերյալ փաստաթղթի տվյալները (տեսակը, համարը, տալու ամսաթիվը, վավերականության ժամկետը և տրամադրող մարմինը), դրանում նշված քաղաքացու անունը, հայրանունը, ազգանունը, ծննդյան օրը, ամիսը, տարեթիվը, ծննդավայրը, սեռը, ինչպես նաև բնակության վայրի (կացարանի) հասցեն,

2006 թվականի հուլիսի 1-ից հետո Հայաստանի Հանրապետությունում քաղաքացու մահվան փաստը հավաստող փաստաթղթի տվյալները (տեսակը, համարը, տալու ամսաթիվը, տրամադրող մարմինը), դրանում նշված քաղաքացու անունը, հայրանունը, ազգանունը, ծննդյան օրը, ամիսը, տարեթիվը, ծննդավայրը, սեռը, բնակության վայրի (կացարանի) հասցեն.

Մինչև Հայաստանի Հանրապետությունում քաղաքացիական կացության ակտերի գրանցման համակարգում համակարգչային ցանցի ներդրումը՝ սույն ենթակետի առաջին, երկրորդ և չորրորդ պարբերություններով նախատեսված տեղեկատվությունը տրամադրում են ՔԿԱԳ-ի տարածքային մարմինները՝ թղթային կրիչի տեսքով:

գ) Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարությունը հյուպատոսական հաշվառման ավտոմատացված համակարգի միջոցով բնակչության պետական ռեգիստրը վարող լիազոր մարմնին է տրամադրում՝

Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս 183 օրվանից ավելի ժամկետով բնակվելու նպատակով հյուպատոսական հաշվառման կանգնած Հայաստանի Հանրապետության քաղաքացիների անձնական տվյալները.

դ) ***(ենթակետն ուժը կորցրել է 14.09.23 N 1576-Ն)***

ե) Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարությունը բնակչության պետական ռեգիստրը վարող լիազոր մարմնին է տրամադրում պարտադիր զինվորական ծառայության զորակոչված անձանց տվյալները (փաստաթղթի համարը, տալու ամսաթիվը, տրամադրող մարմինը), դրանում նշված քաղաքացու անունը, հայրանունը, ազգանունը, ծննդյան օրը, ամիսը, տարեթիվը, ծննդավայրը, սեռը, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունում նրա բնակության վայրի (կացարանի) հասցեն.

զ) Պետական կառավարման համակարգի մարմինները քաղաքացիների անհատական հաշվառման տվյալները կենտրոնական ռեգիստր են փոխանցում՝ լիազոր մարմնի կողմից նախատեսված ժամկետներին համապատասխան:

Կենտրոնական ռեգիստրը համապատասխան տարածքում բնակվող անձանց անհատական հաշվառման տվյալները եռամսյա ժամկետում տրամադրում է տեղական ռեգիստրներին:

Պետական կառավարման համակարգի մարմինները 2006 թվականի հուլիսի 1-ից հետո ստացվող անհատական հաշվառման տվյալները կենտրոնական ռեգիստրին են տրամադրում 15-օրյա պարբերականությամբ:

Կենտրոնական ռեգիստրն անհատական հաշվառման տվյալները փոխանցում է համապատասխան տեղական ռեգիստրին՝ դրանք ստանալուց հետո 7-օրյա ժամկետում:

Սույն որոշման 2-րդ կետի «գ» ենթակետում նշված անձանց անհատական հաշվառման տվյալները պահպանվում են միայն կենտրոնական ռեգիստրում՝ մինչև Հայաստանի Հանրապետությունում նրանց բնակություն հաստատելը:

Չհաշվառված անձանց անհատական հաշվառման տվյալները պահպանվում են միայն կենտրոնական ռեգիստրում՝ մինչև բնակության վայրում կամ որևէ կացարանում նրանց հաշվառելը:

Պետական կառավարման համակարգի մարմինները կենտրոնական ռեգիստրում քաղաքացիների անհատական հաշվառման տվյալները տրամադրում են էլեկտրոնային եղանակով:

Կենտրոնական և տեղական ռեգիստրները քաղաքացիների անհատական հաշվառման տվյալները պետական կառավարման համակարգի, տեղական ինքնակառավարման, իրավապահ մարմիններին և նոտարներին տրամադրում են գրավոր կամ էլեկտրոնային հարցումների հիման վրա:

Քաղաքացուն վերաբերող տվյալները տրամադրվում են անձամբ քաղաքացուն կամ նրա կողմից լիազորված անձին:

(2-րդ կետը լրաց. 01.06.06 N 744-Ն, լրաց., փոփ. 23.11.07 N 1389-Ն, 22.03.12 N 381-Ն, լրաց. 15.11.12 N 1435-Ն, խմբ., փոփ. 29.09.16 N 999-Ն, 22.11.18 N 1308-Ն, փոփ. 14.09.23 N 1576-Ն)

2.1. ***(կետն ուժը կորցրել է 25.06.20 N 1052-Ն)***

3. Լիազոր մարմնի ղեկավարին՝

ա) ապահովել սույն որոշման պահանջների կատարման համար անհրաժեշտ աշխատանքների իրականացումը.

բ) մինչև «Բնակչության պետական ռեգիստրի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 5-րդ կետում նշված ժամկետը լրանալը՝ եռամսյա պարբերականությամբ Հայաստանի Հանրապետության կառավարություն ներկայացնել բնակչության պետական ռեգիստրի ստեղծման ընթացքի և արդյունքների մասին հաշվետվություն:

(3-րդ կետը փոփ. 22.11.18 N 1308-Ն, 14.09.23 N 1576-Ն)

4. Անշարժ գույքի կադաստրի կոմիտեի նախագահին և Հայաստանի Հանրապետության մարզպետներին՝ մինչև 2006 թվականի հունիսի 1-ը ապահովել գյուղական համայնքներում

փողոցների ու տների համարակալումը և գրանցումը:

(4-րդ կետը փոփ. 22.11.18 N 1308-Ն)

5. Հաստատել՝

ա) բնակչության պետական ռեգիստրում անձանց անհատական հաշվառման կարգը՝ համաձայն N 1 հավելվածի.

բ) ***(ենթակետն ուժը կորցրել է 22.03.12 N 381-Ն)***

գ) բնակչության պետական ռեգիստրում անձանց անհատական հաշվառման տվյալների փոփոխության և լրացման կարգը՝ համաձայն N 3 հավելվածի.

դ) բնակչության պետական ռեգիստրում քաղաքացիների անհատական հաշվառման համար անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը՝ համաձայն N 4 հավելվածի.

ե) ***(ենթակետն ուժը կորցրել է 14.09.23 N 1576-Ն)***

զ) բնակչության պետական ռեգիստրում հաշվառված անձի մահից հետո տվյալ անձի անհատական հաշվառման տվյալների իրավական ռեժիմի փոփոխման կարգը՝ համաձայն N 6 հավելվածի:

(5-րդ կետը փոփ. 22.03.12 N 381-Ն, 14.09.23 N 1576-Ն)

Հայաստանի Հանրապետության
վարչապետ **Ա. Մարգարյան**

2005 թ. օգոստոսի 13
Երևան

Հավելված N 1
ՀՀ կառավարության 2005 թվականի
հուլիսի 14-ի N 1231-Ն որոշման

Կ Ա Ր Գ

ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐՈՒՄ ԱՆՁԱՆՑ ԱՆՀԱՏԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Հայաստանի Հանրապետության բնակչության ըստ բնակության վայրի հաշվառումն իրականացվում է կենտրոնական և տեղական ռեգիստրների միջոցով, որոնք մշակում ու համակարգում են քաղաքացիների անհատական հաշվառման տվյալները:

Քաղաքացու անհատական հաշվառման տվյալները նյութական կրիչի վրա գրավոր կամ այլ կերպ ամրագրված ըստ բնակության վայրի ֆիզիկական անձի հաշվառման մասին տվյալներն են:

2. Հայաստանի Հանրապետության բնակիչը բնակչության պետական ռեգիստրում (այսուհետ՝ ռեգիստր) հաշվառվելու համար «Բնակչության պետական ռեգիստրի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված իր մշտական բնակության վայրի (կացարանի) հասցեն տրամադրում է տեղական ռեգիստրին՝ ներկայացնելով սահմանված ձևի դիմում, անձը հաստատող և տվյալ վայրում բնակվելու իրավունքը հավաստող փաստաթղթեր:

Բնակչի մշտական բնակության վայր է համարվում այն վայրը (կացարանը), որտեղ բնակիչն ունի բնակվելու իրավունք, որը հայտարարում է որպես իր մշտական բնակության վայր (կացարան), որտեղ մինչև Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի հուլիսի 14-ի «Հայաստանի Հանրապետությունում բնակչության պետական ռեգիստրի համակարգ ներդնելու մասին» N 1231-Ն որոշումն ուժի մեջ մտնելը՝ գործող օրենսդրությամբ հաշվառված է եղել՝ ըստ մշտական, ժամանակավոր կամ փաստացի բնակության վայրի:

2.1. Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ձեռք բերած, Հայաստանի Հանրապետությունում մշտական բնակության վայր չունեցող և մշտապես կամ առավելապես օտարերկրյա պետությունում բնակվող անձը Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագրով փաստաթղթավորվելիս՝ բնակչության պետական ռեգիստրում հաշվառվում է օտարերկրյա պետությունում իր բնակության վայրի հասցեով:

(2.1-ին կետը լրաց. 08.07.10 N 842-Ն)

3. Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի հուլիսի 14-ի «Հայաստանի Հանրապետությունում բնակչության պետական ռեգիստրի համակարգ ներդնելու մասին» N 1231-Ն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո՝ Հայաստանի Հանրապետությունում ծնվող Հայաստանի Հանրապետության բնակչի բնակության վայր կամ կացարան է համարվում այն վայրը, որտեղ հաշվառված են նրա ծնողները (ծնողը):

4. Եթե սույն կարգի 3-րդ կետում նշված անձի ծնողները հաշվառված են տարբեր հասցեներում, ապա երեխայի ծնունդը գրանցելու ժամանակ ծնողներից մեկը դիմում է երեխայի ծնունդը գրանցող պետական մարմին՝ ծնողներից որևէ մեկի հաշվառման հասցեում երեխային հաշվառելու համար:

(4-րդ կետը խմբ. 22.11.18 N 1308-Ն)

5. Բնակության վայրի հասցեում փոփոխություն լինելու դեպքում (բնակարանի կամ տան համարի փոփոխություն, փողոցի, թաղամասի, համայնքի, բնակավայրի անվանափոխում և այլն) Հայաստանի Հանրապետության բնակիչը հաշվառման մասին նոր դիմում չի ներկայացնում:

6. ***(կետն ուժը կորցրել է 15.11.12 N 1435-Ն)***

II. ՉՀԱՇՎԱՌՎԱԾ ԱՆՁԻ ԿՈՂՄԻՑ ՌԵԳԻՍՏՐԻՆ ՏԵՂԵԿԱՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ

7. Չհաշվառված անձը բնակության վայրի տեղական ռեգիստրին դիմում է ներկայացնում հետևյալ ժամկետներում՝ նշելով բնակության վայրի հասցեն՝

ա) Հայաստանի Հանրապետությունում բնակվող՝ չհաշվառված անձինք՝ մինչև 2006 թվականի դեկտեմբերի 15-ը.

բ) Հայաստանի Հանրապետությունից դուրս ծնված, ծնված օրվանից Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս բնակվող Հայաստանի Հանրապետության քաղաքացին, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս բնակվող՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստացած անձը՝ Հայաստանի Հանրապետությունում բնակություն հաստատելուց հետո 15-օրյա ժամկետում.

գ) Հայաստանի Հանրապետությունում կացության կարգավիճակ ստացած, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունում փախստականի կարգավիճակ, ժամանակավոր ապաստան և քաղաքական ապաստան ստացած անձը՝ համապատասխան կարգավիճակ ստանալուց հետո
15-օրյա ժամկետում:

դ) Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս բնակվող Հայաստանի Հանրապետության երկքաղաքացին՝ Հայաստանի Հանրապետությունում բնակություն հաստատելուց հետո 15-օրյա ժամկետում:

(7-րդ կետը լրաց. 23.12.07 N 1389-Ն)

III. ՄՇՏԱԿԱՆ ԲՆԱԿՈՒԹՅԱՆ ՎԱՅՐԻ ՀԱՍՑԵՆ ՓՈԽԵԼՈՒ ԵՎ ՀԱՇՎԱՌՈՒՄԻՑ ՀԱՆԵԼՈՒ ԴԵՊՔԵՐԸ, ԱՆՁԻ ԿՈՂՄԻՑ ՌԵԳԻՍՏՐԻՆ ՏԵՂԵԿԱՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ

(վերնագիրը խմբ 15.11.12 N 1435-Ն)

8. Ռեգիստրում անձի մշտական բնակության վայրի (կացարանի) հասցեն փոխվում է՝

ա) բնակչի կողմից բնակության վայրը փոխելիս,

բ) Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս 183 օրվանից ավելի ժամկետով բնակվելու նպատակով հյուպատոսական հաշվառման կանգնելու կամ ռեգիստր վարող լիազոր մարմին օտարերկրյա պետությունում մշտապես կամ առավելապես բնակվելը հաստատող համապատասխան փաստաթղթեր (անձնագիր կամ օտարերկրյա պետությունում օրինական բնակությունը հավաստող այլ փաստաթուղթ և դրանց՝ օրենքով սահմանված կարգով կատարված թարգմանությունները) ներկայացնելու դեպքում,

գ) ***(ենթակետն ուժը կորցրել է 15.11.12 N 1435-Ն)***

դ) զինծառայության զորակոչվելիս,

ե) ազատազրկման դատապարտվելու կապակցությամբ՝ պատիժը քրեակատարողական հիմնարկում կրելիս:

(8-րդ կետը փոփ., խմբ. 15.11.12 N 1435-Ն, խմբ. 29.09.16 N 999-Ն, լրաց. 22.11.18 N 1308-Ն)

8.1. Անձը հանվում է հաշվառումից՝

1) սեփականատիրոջ կամ համասեփականատերերից մեկի դիմումի կամ դատարանի վճռի հիման վրա,

2) անձի մահվան կամ դատարանի որոշմամբ մահացած ճանաչվելու դեպքում,

3) Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն չունեցող անձի մշտական բնակության նպատակով Հայաստանի Հանրապետությունից մեկնելու դեպքում՝ դրա մասին իր հաշվառման վայրի տեղական ռեգիստրին գրավոր տեղեկացնելու դեպքում,

4) Հայաստանի Հանրապետությունում կացության կարգավիճակի վավերականության ժամկետը լրանալու դեպքում,

5) Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը դադարեցնելու դեպքում:

(8.1-ին կետը լրաց. 15.11.12 N 1435-Ն, 28.03.13 N 307-Ն, 22.11.18 N 1308-Ն)

9. Մշտական բնակության վայրը (կացարանը) փոխելիս՝ քաղաքացին դիմում է նոր բնակության վայրի տեղական ռեգիստրին՝ նոր բնակության վայրում հաշվառվելու համար:

(9-րդ կետը խմբ., փոփ. 04.11.10 N 1407-Ն)

10. Կենտրոնական ռեգիստրը Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս 183 օրվանից ավելի ժամկետով բնակվելու նպատակով հյուպատոսական հաշվառման կանգնած Հայաստանի Հանրապետության քաղաքացիների տվյալներն ստանալուց հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում անձին հանում է հաշվառումից՝ տեղական ռեգիստրում պահպանելով նրա անձնական հաշվառման տվյալները՝ միաժամանակ հաշվառելով օտարերկրյա պետությունում հյուպատոսական հաշվառման հասցեով:

Սույն կետում նշված կարգով զինապարտ քաղաքացին օտարերկրյա պետությունում մշտական բնակության վայրի հասցեով հաշվառվում է զինապարտ քաղաքացու անհատական հաշվառման քարտում տարածքային զինկոմիսարիատի կողմից համապատասխան նշում կատարելուց և քարտը տեղական ռեգիստրում ստանալուց հետո՝ 3 աշխատանքային օրվա ընթացքում:

(10-րդ կետը լրաց. 15.11.12 N 1435-Ն, խմբ. 29.09.16 N 999-Ն, փոփ. 22.11.18 N 1308-Ն)

11. Բնակիչն զբաղեցրած բնակելի տարածությունն օգտագործելու իրավունքը կորցնելուց

հետո 7-օրյա ժամկետում համապատասխան տեղական ռեգիստրին գրավոր տեղեկացնում է իր նոր բնակության վայրի հասցեն:

(11-րդ կետը փոփ. 15.11.12 N 1435-Ն)

12. Պարտադիր զինվորական ծառայության զորակոչված անձանց փաստացի բնակության և հաշվառման հասցեի վերաբերյալ տեղեկատվությունը զորամասի հրամանատարը 7-օրյա ժամկետում ներկայացնում է զորամասի գտնվելու վայրի տեղական ռեգիստր:

(12-րդ կետը փոփ. 22.11.18 N 1308-Ն)

13. Ազատազրկման դատապարտված անձանց փաստացի բնակության և հաշվառման հասցեի վերաբերյալ տեղեկատվությունը պատիժն իրականացնող մարմնի ղեկավարը 7-օրյա ժամկետում ներկայացնում է հիմնարկի գտնվելու վայրի տեղական ռեգիստր:

(13-րդ կետը փոփ. 22.11.18 N 1308-Ն)

13.1. Բնակելի տարածության սեփականատիրոջ դիմումի հիման վրա տվյալ բնակելի տարածության նկատմամբ օգտագործման իրավունք չունեցող անձին հաշվառումից հանելու համար տեղական ռեգիստրը Անշարժ գույքի կադաստրի կոմիտեի տեղեկատվական բազայից էլեկտրոնային եղանակով պարզում է տվյալ բնակելի տարածության նկատմամբ սեփականության, ինչպես նաև օգտագործման իրավունք ունեցող անձանց ցանկը: Եթե դիմումում նշված անձը տվյալ բնակելի տարածության նկատմամբ չունի սեփականության կամ օգտագործման իրավունք, ապա հաշվառումից հանվում է: Հաշվառումից հանելուց հետո տեղական ռեգիստրը 3 աշխատանքային օրվա ընթացքում ծանուցում է հաշվառումից հանված անձին՝ ծանուցման մեջ նշելով հաշվառումից հանելու ժամկետը, իրավական հիմքը, ինչպես նաև «Բնակչության պետական ռեգիստրի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված մշտական բնակության վայրը (կացարանը) փոխելիս նոր կացարանի տեղական ռեգիստրին գրավոր տեղեկացնելու պարտականության և պարտականությունը չկատարելու դեպքում օրենքով սահմանված պատասխանատվության մասին:

Հաշվառումից հանելու վերաբերյալ դիմումն ստանալուց հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում տեղական ռեգիստրը դիմումում նշված՝ տվյալ բնակելի տարածության նկատմամբ սեփականության կամ օգտագործման իրավունք չունեցող անձին հանում է հաշվառումից կամ նույն ժամկետում գրավոր մերժում է դիմումատուին, եթե դիմումում նշված անձը տվյալ բնակելի տարածության նկատմամբ ունի սեփականության կամ օգտագործման իրավունք կամ դիմումատուն չունի տվյալ բնակելի տարածության նկատմամբ սեփականության իրավունք:

Սույն կետով սահմանված հիմքով զինապարտ քաղաքացուն հաշվառումից հանելու դեպքում տեղական ռեգիստրը 1 աշխատանքային օրվա ընթացքում տեղեկատվություն է ուղարկում տարածքային զինկոմիսարիատ:

Մինչև տեղական ռեգիստրը Անշարժ գույքի կադաստրի կոմիտեի տեղեկատվական բազայի հետ էլեկտրոնային կապով ապահովելը, բնակելի տարածության նկատմամբ սեփականության, ինչպես նաև օգտագործման իրավունք ունեցող անձանց պարզելու նպատակով տեղական ռեգիստրը դիմումն ստանալուց հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր հարցում է ուղարկում Անշարժ գույքի կադաստրի կոմիտե:

Անշարժ գույքի կադաստրի կոմիտեն սույն կետի չորրորդ պարբերությունով նախատեսված գրավոր հարցմանը պատասխանում է այն ստանալուց հետո 7 աշխատանքային օրվա ընթացքում: Եթե դիմումում նշված անձը տվյալ բնակելի տարածության նկատմամբ չունի սեփականության կամ օգտագործման իրավունք, ապա հաշվառումից հանվում է Անշարժ գույքի կադաստրի կոմիտեից գրավոր պատասխանն ստանալուց հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում: Եթե դիմումում նշված անձը տվյալ բնակելի տարածության նկատմամբ ունի սեփականության կամ օգտագործման իրավունք կամ դիմումատուն չունի տվյալ բնակելի տարածության նկատմամբ սեփականության իրավունք, ապա տեղական ռեգիստրը գրավոր մերժում է դիմումատուին՝ Անշարժ գույքի կադաստրի կոմիտեից գրավոր պատասխանն ստանալուց հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում: Տեղական ռեգիստրը հաշվառումից հանված անձին ծանուցում է սույն կետով սահմանված կարգով և ժամկետում:

(13.1-ին կետը լրաց. 15.11.12 N 1435-Ն, փոփ. 22.11.18 N 1308-Ն)

IV. ԴԻՄՈՒՄԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

14. Չհաշվառված անձանց կողմից ռեգիստրում հաշվառման կանգնելու մասին դիմումի, ինչպես նաև բնակության նոր վայրում հաշվառման մասին դիմումների ձևերը հաստատում է լիազորված մարմինը:

15. Մինչև 16 տարեկան քաղաքացու դիմումն ստորագրում է նրա ծնողը (որդեգրողը) կամ օրինական ներկայացուցիչը (խնամակալը, հոգաբարձուն): Խնամակալական կազմակերպության խնամքի ներքո գտնվող՝ մինչև 16 տարեկան քաղաքացու դիմումն ստորագրում է խնամակալական կազմակերպության տնօրենը կամ նրա կողմից լիազորված անձը: Դատարանի վճռով անգործունակ կամ սահմանափակ գործունակ ճանաչված քաղաքացու դիմումն ստորագրում է նրա խնամակալը կամ հոգաբարձուն:

16. ***(կետն ուժը կորցրել է 15.11.12 N 1435-Ն)***

17. Բնակիչը ռեգիստրում հաշվառման մասին դիմումի հետ միասին ներկայացնում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի հուլիսի 14-ի «Հայաստանի

Հանրապետությունում բնակչության պետական ռեգիստրի համակարգ ներդնելու մասին» N 1231-Ն որոշման N 4 հավելվածով սահմանված փաստաթղթերը:

V. ՌԵԳԻՍՏՐՈՒՄ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԿԱՐԳԸ

17.1. Չհաշվառված, ինչպես նաև մշտական բնակության նոր վայրում (կացարանում) հաշվառվող անձանց անհատական տվյալները բնակչության պետական ռեգիստր մուտքագրվում են դիմումն ստանալուց հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում, իսկ բնակչության պետական ռեգիստրում հաշվառման մասին տեղեկանքը տրամադրվում է դիմումն ստանալուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում, եթե պահպանվել են դիմումին ներկայացվող պահանջները, և ամբողջական է պահանջվող փաստաթղթերի ցանկը:

(17.1-ին կետը լրաց. 04.11.10 N 1407-Ն, 15.11.12 N 1435-Ն, փոփ. 22.11.18 N 1308-Ն)

17.2. Եթե դիմումին կից ներկայացվող փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ, ապա դիմումն ընդունվում է, և դիմումատուին առաջարկվում է 30-օրյա ժամկետում համալրել այդ ցանկը: Սույն կետով սահմանված ժամկետում փաստաթղթերի ցանկը համալրելուց հետո անձանց անհատական տվյալները բնակչության պետական ռեգիստր մուտքագրվում են 3 աշխատանքային օրվա ընթացքում:

(17.2-րդ կետը լրաց. 04.11.10 N 1407-Ն, 15.11.12 N 1435-Ն)

17.3. Անձի կողմից փաստաթղթերը 30-օրյա ժամկետում ամբողջական չներկայացվելու դեպքում դիմումը թողնվում է անհետևանք:

(17.3-րդ կետը լրաց. 04.11.10 N 1407-Ն)

17.4. Չհաշվառված, ինչպես նաև մշտական բնակության նոր վայրում (կացարանում) հաշվառվող անձանց անհատական տվյալների մուտքագրման մերժման հիմքերը պարզվում են դիմումը մուտքագրվելուց հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում, իսկ բնակչության պետական ռեգիստրում հաշվառման մասին տեղեկանքի տրամադրման մերժման հիմքերը՝ դիմումը մուտքագրվելուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում:

(17.4-րդ կետը լրաց. 04.11.10 N 1407-Ն, 15.11.12 N 1435-Ն)

17.5. Բնակչության պետական ռեգիստրում հաշվառման մասին տեղեկանքի տրամադրումը մերժվում է, եթե՝

1) ***(ենթակետն ուժը կորցրել է 22.11.18 N 1308-Ն)***

2) օրենքով նախատեսված դեպքերում անձը չի վճարել պետական տուրքը.

3) դիմումատուն չի ներկայացրել անձը հաստատող փաստաթուղթ:

(17.5-րդ կետը լրաց. 04.11.10 N 1407-Ն, փոփ., լրաց. 22.11.18 N 1308-Ն)

17.6. Չհաշվառված, ինչպես նաև մշտական բնակության նոր վայրում (կացարանում) հաշվառվող անձանց անհատական տվյալների մուտքագրման կամ բնակչության պետական ռեգիստրում հաշվառման մասին տեղեկանքի տրամադրման մերժումը կատարվում է գրավոր՝ մերժման հիմքերը պարզվելուց հետո հաջորդ աշխատանքային օրը:

(17.6-րդ կետը լրաց. 04.11.10 N 1407-Ն, 15.11.12 N 1435-Ն)

17.7. Բնակչության պետական ռեգիստրում անձանց հաշվառման մասին տեղեկությունները տրամադրվում են՝ համաձայն NN 1, 2, 3, 4, 5 ձևերով նախատեսված տեղեկանքների:

(17.7-րդ կետը լրաց. 25.06.20 N 1052-Ն)

17.8. Քաղաքացին իր կամ իր անչափահաս երեխայի համար բնակչության պետական ռեգիստրում հաշվառման մասին տեղեկանք կարող է ստանալ նաև առցանց դիմելու եղանակով՝ migration.e-gov.am հարթակի միջոցով: Համակարգը քաղաքացու նույնացումն ապահովելու պարագայում ինքնաշխատ եղանակով ձևավորում է հաշվառման վերաբերյալ տեղեկանք՝ ՊԴՖ (PDF) ձևաչափով և ուղարկում դիմողի էլեկտրոնային փոստի հասցեին: Տեղեկանքը պարունակում է սույն կարգի 17.7-րդ կետով հաստատված տեղեկանքների համապատասխան ձևերում ներառված տեղեկատվությունը, ինչպես նաև հսկիչ համար և արագ արձագանքման կոդ, ինչը հնարավորություն է տալիս Հայաստանի Հանրապետության փաստաթղթերի վավերականության ստուգման միասնական verify.e-gov.am հարթակի միջոցով ստուգել փաստաթղթի իսկությունն ու դրանում ամրագրված տեղեկությունները:

(17.8-րդ կետը լրաց. 14.09.23 N 1576-Ն)

18. Տեղական ռեգիստրի աշխատողն ստուգում է դիմումին ներկայացվող պահանջների ճշտությունը, փաստաթղթերի լրիվությունը և ստորագրությամբ վավերացնում է դրանք:

Տեղական ռեգիստրի աշխատողը դիմումը ներկայացնողին տեղեկացնում է կեղծ տեղեկություններ (տվյալներ, փաստաթղթեր) ներկայացնելու համար օրենքով նախատեսված պատասխանատվության մասին:

(18-րդ կետը լրաց. 08.07.10 N 842-Ն, փոփ. 14.09.23 N 1576-Ն)

19. Դիմումը ռեգիստր ներկայացնում է քաղաքացին կամ նրա կողմից լիազորված անձը:

20. Կենտրոնական և տեղական ռեգիստրներում անձի մշտական բնակության վայրի (կացարանի) մասին տեղեկությունները մուտքագրվում են այլ ռեգիստրներից՝ դրանք ստացվելուց հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում:

20.1. Եթե չհաշվառված կամ բնակության վայրը փոխելու կապակցությամբ հաշվառվող անձը չի կարող ներկայացնել տվյալ տարածքում բնակվելու իր իրավունքը հավաստող փաստաթուղթ, ապա անձի՝ դիմումում նշված հասցեում բնակվելու փաստն ստուգվում է ոստիկանության կողմից, դիմումն ստանալուց հետո ոչ ուշ, քան 5 աշխատանքային օրվա ընթացքում: Դիմումում նշված հասցեում անձի բնակվելու փաստն ստուգելուց հետո նույն

աշխատանքային օրը, բայց ոչ ուշ քան հաջորդ աշխատանքային օրվա ժամը 10:00-ն, ոստիկանության կողմից տեղական ռեգիստր է ուղարկվում փաստացի բնակվելու փաստը հավաստող կամ հերքող տեղեկատվություն (տեղեկանք կամ գրություն):

Սույն կետով նախատեսված անձանց հաշվառումն իրականացվում է փաստացի բնակվելու փաստը հավաստող տեղեկատվությունը (տեղեկանքը կամ գրությունը) տեղական ռեգիստր ստացվելուց հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում: Փաստացի բնակվելու փաստը հերքող տեղեկատվություն (տեղեկանք կամ գրություն) ստանալուց հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում տեղական ռեգիստրը գրավոր մերժում է դիմումատուին:

Այն դեպքերում, երբ նախապես հայտնի է բնակելի տարածության սեփականատիրոջ առարկությունն իր բնակելի տարածության հասցեում դիմումատուին հաշվառելու վերաբերյալ, կամ դիմումատուն բնակվում է (գտնվում է) բնակելի տարածություն չհանդիսացող տարածքում, ապա ռեգիստրում կատարվում է նշում փաստացի բնակվելու (գտնվելու) վայրի մասին:

(20.1-ին կետը լրաց. 15.11.12 N 1435-Ն, փոփ. 22.11.18 N 1308-Ն)

21. Չհաշվառված անձանց կողմից ռեգիստրում հաշվառման կանգնելու կամ մշտական բնակության նոր վայրում (կացարանում) հաշվառվելու մասին դիմումները մերժվում են, եթե՝

ա) անձը չունի տվյալ բնակության վայրում (կացարանում) բնակվելու իրավունք,

բ) ***(ենթակետն ուժը կորցրել է 22.11.18 N 1308-Ն)***

գ) ներկայացվել են կեղծ փաստաթղթեր,

դ) բնակելի տարածությունը չունի հասցե,

ե) բնակելի տարածությունը քանդված է կամ այլ կերպ դադարել է գոյություն ունենալ:

Ռեգիստրում անչափահաս երեխան հաշվառվում է ծնողներից որևէ մեկի կամ օրինական ներկայացուցչի հաշվառման վայրում՝ անկախ բնակելի տարածության սեփականատիրոջ համաձայնությունից: Եթե օրենքով սահմանված կարգով երեխայի խնամքը հանձնված է ծնողներից մեկին, ապա նա հաշվառվում է այդ ծնողի հաշվառման հասցեով՝ ծնողի կողմից լիազոր մարմին դիմում և համապատասխան փաստաթուղթ (երեխայի բնակության վայրը որոշելու՝ նոտարական կարգով վավերացված համաձայնության պատճենը կամ դատական ակտի պատճենը) ներկայացնելու դեպքում: Երեխայի հաշվառումն իրականացնելիս ՀՀ կառավարության 2005 թվականի հուլիսի 14-ի N 1231-Ն որոշման 4-րդ հավելվածի 3-րդ կամ 5-րդ կետերով սահմանված՝ տվյալ վայրում բնակվելու իրավունքը հավաստող փաստաթղթերը չեն պահանջվում՝ բացառությամբ այն դեպքերի, երբ առկա է ծնողներից մեկի գրավոր անհամաձայնությունը երեխային մյուս ծնողի հաշվառման հասցեում հաշվառելու վերաբերյալ: Այս դեպքում գրավոր անհամաձայնությանը կցվում է նաև երեխայի՝ ծնողներից մեկի հետ բնակվելու օրինականությունը հավաստող փաստաթուղթ (դատարանի վճիռ կամ այլ փաստաթուղթ), որի հիմքով կատարվում է երեխայի հաշվառումը:

Երեխայի՝ ծնողներից մեկի հետ բնակվելու օրինականությունը հավաստող փաստաթղթի բացակայության դեպքում երեխայի բնակության փաստը ստուգվում է ոստիկանության կողմից՝ սույն հավելվածի 20.1-ին կետով սահմանված կարգով: Այս դեպքում երեխայի հաշվառումն իրականացվում է ոստիկանության կողմից տրամադրված փաստացի բնակության վերաբերյալ տեղեկանքի հիման վրա՝ այն ծնողի հաշվառման հասցեով, որի հետ երեխան բնակվում է:

Ռեգիստրում Հայաստանի Հանրապետության զինապարտ քաղաքացիների հաշվառումը կատարվում է զինվորական հաշվառման վերաբերյալ նշումների առկայության դեպքում:

(21-րդ կետը լրաց., փոփ. 15.11.12 N 1435-Ն, 22.11.18 N 1308-Ն)

VI. ԱՆՁԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՐԽԻՎԱՑՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ ԵՎ ԿԱՐԳԸ

22. Անձի անհատական հաշվառման տվյալներն արխիվացվում են՝

ա) անձի մահվան կամ դատարանի որոշմամբ մահացած ճանաչվելու դեպքում,

բ) Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն չունեցող անձի՝ մշտական բնակության նպատակով Հայաստանի Հանրապետությունից մեկնելու դեպքում:

23. Անձի մահը գրանցած մարմինը մահվան պետական գրանցումը կատարելուց հետո անհապաղ մահվան փաստը հավաստող փաստաթղթի տվյալները (տեսակը, համարը, տալու ամսաթիվը, տրամադրող մարմինը), դրանում նշված քաղաքացու անունը, հայրանունը, ազգանունը, ծննդյան օրը, ամիսը, տարեթիվը, ծննդավայրը, սեռն առցանց մուտքագրում է ռեգիստր, որի հիման վրա ինքնաշխատ եղանակով անձը հանվում է հաշվառումից:

(23-րդ կետը փոփ. 15.11.12 N 1435-Ն, խմբ. 14.09.23 N 1576-Ն)

24. Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն չունեցող անձը մշտական բնակության նպատակով Հայաստանի Հանրապետությունից մեկնելու դեպքում դրա մասին գրավոր տեղեկացնում է այն տեղական ռեգիստրին, որտեղ նա հաշվառված է: Տեղական ռեգիստրը 3 աշխատանքային օրվա ընթացքում անձին հանում է հաշվառումից:

(24-րդ կետը փոփ. 14.09.23 N 1576-Ն)

25. Սույն կարգի 22-րդ կետում նշված անձանց վերաբերյալ ռեգիստրում կուտակված անհատական հաշվառման տվյալները պահպանվում են կենտրոնական ռեգիստրի արխիվում:

Ձև 1

ՏԵՂԵԿԱՆՔ N

_____

ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐՈՒՄ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐԻ ՏՎՅԱԼՆԵՐՈՎ ՔԱՂ._____՝ ԾՆՎԱԾ _____Թ. ՀԱՇՎԱՌՎԱԾ Է _____Թ.

_____
_____ ՀԱՍՑԵՈՒՄ

ԱՆՁԸ ՀԱՍՏԱՏՈՂ ՓԱՍՏԱԹՈՒՂԹ՝ _____

ՏԵՂԵԿԱՆՔԸ ՏՐՎՈՒՄ Է ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ_____

ՍՏՈՐԱԲԱԺԱՆՄԱՆ ՂԵԿԱՎԱՐ՝ _____

ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ _____Կ. Տ.

_____20___Թ.

(ձևը լրաց. 25.06.20 N 1052-Ն, փոփ. 14.09.23 N 1576-Ն)

Ձև 2

ՏԵՂԵԿԱՆՔ N_____

ԱՆՁԻ՝ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐՈՒՄ ԱՌԿԱ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԲՈԼՈՐ ՀԱՍՑԵՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐԻ ՏՎՅԱԼՆԵՐՈՎ ՔԱՂ._____՝ ԾՆՎԱԾ_____Թ. ՀԱՇՎԱՌՄԱՆ ՀԱՍՑԵՆԵՐՆ ԵՆ՝

1._____ԹՎԻՑ _____Թ. ՀԱՇՎԱՌՎԵԼ Է _____
_____ՀԱՍՑԵՈՒՄ

2. _____ԹՎԻՑ _____Թ. ՀԱՇՎԱՌՎԵԼ Է _____
_____ՀԱՍՑԵՈՒՄ

ԱՆՁԸ ՀԱՍՏԱՏՈՂ ՓԱՍՏԱԹՈՒՂԹ՝ _____

ՏԵՂԵԿԱՆՔԸ ՏՐՎՈՒՄ Է ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ_____

ՍՏՈՐԱԲԱԺԱՆՄԱՆ ՂԵԿԱՎԱՐ՝ _____

ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ _____Կ. Տ.

_____20___Թ.

(ձևը լրաց. 25.06.20 N 1052-Ն, փոփ. 14.09.23 N 1576-Ն)

Ձև 3

ՏԵՂԵԿԱՆՔ N_____

ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐՈՒՄ ՀԱՇՎԱՌՎԱԾ ՉԼԻՆԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՔԱՂ. _____՝ ԾՆՎԱԾ _____Թ.

ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐԻ ՏՎՅԱԼՆԵՐՈՎ ՀԱՇՎԱՌՎԱԾ ՉԷ

ԱՆՁԸ ՀԱՍՏԱՏՈՂ ՓԱՍՏԱԹՈՒՂԹ՝ _____

ՏԵՂԵԿԱՆՔԸ ՏՐՎՈՒՄ Է ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ_____

ՍՏՈՐԱԲԱԺԱՆՄԱՆ ՂԵԿԱՎԱՐ՝ _____

ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ _____Կ. Տ.

_____20___Թ.

(ձևը լրաց. 25.06.20 N 1052-Ն, փոփ. 14.09.23 N 1576-Ն)

Ձև 4

ՏԵՂԵԿԱՆՔ N_____

ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐՈՒՄ ԱՌԿԱ ԿՈՆԿՐԵՏ ՀԱՍՑԵՈՒՄ ՀԱՇՎԱՌՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐԻ ՏՎՅԱԼՆԵՐՈՎ_____ _____ ՀԱՍՑԵՈՒՄ ՀԱՇՎԱՌՎԱԾ ԵՆ՝

1. _____՝ ԾՆՎԱԾ_____Թ.
ԱՆՁԸ ՀԱՍՏԱՏՈՂ ՓԱՍՏԱԹՈՒՂԹ՝ _____

2. _____՝ ԾՆՎԱԾ_____Թ.
ԱՆՁԸ ՀԱՍՏԱՏՈՂ ՓԱՍՏԱԹՈՒՂԹ՝ _____

3. _____՝ ԾՆՎԱԾ_____Թ.
ԱՆՁԸ ՀԱՍՏԱՏՈՂ ՓԱՍՏԱԹՈՒՂԹ՝ _____

ՏԵՂԵԿԱՆՔԸ ՏՐՎՈՒՄ Է ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ_____

ՍՏՈՐԱԲԱԺԱՆՄԱՆ ՂԵԿԱՎԱՐ՝ _____

ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ _____Կ. Տ.

_____20___Թ.

1/1

(ձևը լրաց. 25.06.20 N 1052-Ն, փոփ. 14.09.23 N 1576-Ն)

Ձև 5

ՏԵՂԵԿԱՆՔ N_____

ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐՈՒՄ ԱՌԿԱ ԿՈՆԿՐԵՏ ՀԱՍՑԵՈՒՄ ՀԱՇՎԱՌՎԱԾ ԵՎ ՀԱՇՎԱՌՈՒՄԻՑ ՀԱՆՎԱԾ ԲՈԼՈՐ ԱՆՁԱՆՑ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐԻ ՏՎՅԱԼՆԵՐՈՎ _____ _____ ՀԱՍՑԵՈՒՄ ՀԱՇՎԱՌՎԱԾ ԵՆ՝

1._____՝ ԾՆՎԱԾ _____Թ.
ԱՆՁԸ ՀԱՍՏԱՏՈՂ ՓԱՍՏԱԹՈՒՂԹ՝ _____
«_____ԹՎԻՑ_____Թ.» «ԹՎԻՑ_____ »

2._____՝ ԾՆՎԱԾ _____Թ.
ԱՆՁԸ ՀԱՍՏԱՏՈՂ ՓԱՍՏԱԹՈՒՂԹ՝ _____ «_____ԹՎԻՑ_____Թ.» «ԹՎԻՑ_____ »

3._____՝ ԾՆՎԱԾ _____Թ.
ԱՆՁԸ ՀԱՍՏԱՏՈՂ ՓԱՍՏԱԹՈՒՂԹ՝ _____ «_____ԹՎԻՑ_____Թ.» «ԹՎԻՑ_____ »

ՏԵՂԵԿԱՆՔԸ ՏՐՎՈՒՄ Է ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ_____

ՍՏՈՐԱԲԱԺԱՆՄԱՆ ՂԵԿԱՎԱՐ՝ _____

ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ _____Կ. Տ. _____20___Թ.

(ձևը լրաց. 25.06.20 N 1052-Ն, փոփ. 14.09.23 N 1576-Ն)

(հավելվածը լրաց. 23.12.07 N 1389-Ն, 08.07.10 N 842-Ն, փոփ., խմբ., լրաց. 04.11.10 N 1407-Ն, 15.11.12 N 1435-Ն, լրաց. 28.03.13 N 307-Ն, խմբ. 29.09.16 N 999-Ն, խմբ., լրաց., փոփ. 22.11.18 N 1308-Ն, լրաց. 25.06.20 N 1052-Ն, փոփ., լրաց., խմբ. 14.09.23 N 1576-Ն)

Հայաստանի Հանրապետության
կառավարության աշխատակազմի
ղեկավար-նախարար **Մ. Թոփուզյան**

Հավելված N 2
ՀՀ կառավարության 2005 թվականի
հուլիսի 14-ի N 1231-Ն որոշման

Կ Ա Ր Գ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՔԱՐՏԵՐ ՍՏԱՑԱԾ ԱՆՁԱՆՑ ՄԱՍԻՆ ՏՎՅԱԼՆԵՐԸ ԼԻԱԶՈՐ ՄԱՐՄՆԻՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐՈՒՄ ՀԱՇՎԱՌՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՔԱՐՏԵՐԻ ՀԱՄԱՐՆԵՐԸ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐ ՄՈՒՏՔԱԳՐԵԼՈՒ
(հավելվածն ուժը կորցրել է 22.03.12 N 381-Ն)

Հավելված N 3
ՀՀ կառավարության 2005 թվականի
հուլիսի 14-ի N 1231-Ն որոշման

Կ Ա Ր Գ

ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐՈՒՄ ԱՆՁԱՆՑ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԱՆՀԱՏԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ԵՎ ԼՐԱՑՄԱՆ

1. Սույն կարգով կարգավորվում են բնակչության պետական ռեգիստրում (այսուհետ՝ ռեգիստր) հաշվառված անձանց անհատական հաշվառման տվյալների փոփոխության և լրացման հետ կապված հարաբերությունները:

2. Ռեգիստրում մշակված՝ անձի անհատական հաշվառման տվյալները փոփոխվում կամ լրացվում են, եթե՝

ա) ռեգիստրում կուտակված անհատական հաշվառման տվյալներում առկա են անճշտություններ,

բ) փոխվել է անձին վերաբերող՝ ռեգիստրում կուտակված որևէ անհատական հաշվառման տվյալ:

3. Ռեգիստրում մշակված՝ անձի անհատական հաշվառման տվյալները պաշտոնական փաստաթղթի տվյալներին չհամապատասխանելու դեպքում դիմումը համապատասխան փաստաթղթի հետ միասին ներկայացվում է կենտրոնական կամ տեղական ռեգիստր:

Ռեգիստրի աշխատողն ստուգում է դիմումը, ներկայացված փաստաթղթերը և ստորագրությամբ վավերացնում դրանք:

4. Ռեգիստրը դիմումն ստանալուց հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում կատարում է համապատասխան փոփոխություններ կամ լրացումներ:

5. Ռեգիստրում մշակվող անհատական հաշվառման տվյալների փոփոխություն կամ լրացում կատարող լիազորված պետական մարմինները 7-օրյա ժամկետում դրա մասին տեղեկացնում են կենտրոնական ռեգիստրին:

6. Ռեգիստրում կուտակված և հետագայում փոփոխություն կրած անհատական հաշվառման տվյալներն սկզբնական (նախնական) տեսքով պահպանվում են ռեգիստրի արխիվում:

Հայաստանի Հանրապետության
կառավարության աշխատակազմի
ղեկավար-նախարար **Մ. Թոփուզյան**

Հավելված N 4
ՀՀ կառավարության 2005 թվականի
հուլիսի 14-ի N 1231-Ն որոշման

Ց Ա Ն Կ

ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐՈՒՄ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ

1. Հայաստանի Հանրապետությունից դուրս ծնված Հայաստանի Հանրապետության քաղաքացիների մշտական բնակության վայրի (կացարանի) մասին գրավոր տեղեկացնելու դեպքում՝ նշված անձանց ծնողները (կամ օրինական ներկայացուցիչները) դիմումի հետ միասին ներկայացնում են նաև երեխայի ծննդյան մասին վկայող փաստաթուղթ, ծնողների Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը հավաստող փաստաթուղթ, բնակության

երկրի օրենսդրությամբ սահմանված կարգով հաշվառված լինելու կամ բնակության թույլտվություն ունենալու մասին փաստաթուղթ:

2. Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի հուլիսի 14-ի «Հայաստանի Հանրապետությունում բնակչության պետական ռեգիստրի համակարգ ներդնելու մասին» N 1231-Ն որոշմամբ հաստատված բնակչության պետական ռեգիստրում անձանց անհատական հաշվառման կարգի 4-րդ կետով սահմանված կարգով բնակության տարբեր վայրերում հաշվառված ծնողներից մեկը դիմումի հետ միասին ներկայացնում է իր անձը հաստատող փաստաթուղթը և երեխայի ծննդյան վկայականը:

(2-րդ կետը փոփ. 22.11.18 N 1308-Ն)

3. Հայաստանի Հանրապետությունում բնակվող՝ չհաշվառված Հայաստանի Հանրապետության քաղաքացիները ռեգիստրում հաշվառվելու համար դիմումի հետ միասին ներկայացնում են անձը հաստատող և տվյալ բնակության վայրում բնակվելու իրավունքը հավաստող փաստաթղթեր (սեփականության կամ օգտագործման իրավունքի վկայական, դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճիռ, սեփականատիրոջ համաձայնություն, ոստիկանության կողմից տրված փաստացի բնակվելը հավաստող փաստաթուղթ, քանի դեռ բնակելի տարածության սեփականատիրոջ կողմից հաշվառման վերաբերյալ գրավոր առարկություն չի ստացվել, բնակվելու իրավունքը հավաստող՝ օրենքով նախատեսված այլ փաստաթղթեր):

(3-րդ կետը խմբ. 08.07.10 N 842-Ն, լրաց. 15.11.12 N 1435-Ն)

4. Հայաստանի Հանրապետությունում բնակվող՝ չհաշվառված Հայաստանի Հանրապետության քաղաքացի չհանդիսացող անձինք դիմումի հետ միասին ներկայացնում են անձը հաստատող փաստաթուղթ, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության տարածքում իրենց բնակության իրավունքը (կացության կարգավիճակը, քաղաքական, ժամանակավոր ապաստան ստանալու, փախստականի կարգավիճակ հայցողի կարգավիճակը) հավաստող փաստաթուղթ:

Օտարերկրյա պետության համապատասխան մարմնի կողմից տրված՝ անձը հաստատող փաստաթղթի հետ միասին ներկայացվում է փաստաթղթի նոտարական կարգով վավերացված պատճենը կամ համապատասխան մարմնի կողմից տրված ապոստիլը:

5. Մշտական բնակության վայրը (կացարանը) փոխելու դեպքում բնակության նոր վայրում հաշվառվելու համար քաղաքացիները դիմումի հետ միասին ներկայացնում են անձը հաստատող և տվյալ վայրում բնակվելու իրավունքը հավաստող փաստաթղթեր (սեփականության կամ օգտագործման իրավունքի վկայական, դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճիռ, սեփականատիրոջ համաձայնություն, ոստիկանության կողմից տրված փաստացի բնակվելը հավաստող փաստաթուղթ, քանի դեռ բնակելի տարածության սեփականատիրոջ կողմից հաշվառման վերաբերյալ գրավոր առարկություն չի ստացվել, բնակվելու իրավունքը հավաստող՝ օրենքով նախատեսված այլ փաստաթղթեր):

(5-րդ կետը խմբ. 08.07.10 N 842-Ն, լրաց. 15.11.12 N 1435-Ն)

5.1. Սույն ցանկի 3-րդ և 5-րդ կետերով նախատեսված՝ սեփականատիրոջ կողմից տրվող գրավոր համաձայնության ձևը սահմանում է լիազորված մարմնի ղեկավարը: Սեփականատերը նշված համաձայնությունը տալիս է անձամբ կամ նոտարական վավերացմամբ: Համաձայնության մեջ պետք է նշվեն այն անձանց տվյալները (անուն, ազգանուն, հայրանուն և ծննդյան օր, ամիս, ամսաթիվ), որոնց սեփականատերը ցանկանում է հաշվառել իր բնակելի տարածության հասցեում: Այն դեպքում, երբ բնակելի տարածությունն ունի մի քանի սեփականատեր, ապա անձին հաշվառելու համար անհրաժեշտ է ներկայացնել բոլոր սեփականատերերի համաձայնությունը:

(5.1-ին կետը լրաց. 08.07.10 N 842-Ն, 22.11.18 N 1308-Ն)

6. ***(կետն ուժը կորցրել է 29.09.16 N 999-Ն)***

7. Զբաղեցրած բնակելի տարածությունն օգտագործելու իրավունքը կորցրած անձը նոր բնակության վայրում հաշվառվելու մասին դիմումի հետ միասին ներկայացնում է անձը հաստատող և տվյալ վայրում բնակվելու իրավունքը հավաստող փաստաթուղթ (սեփականության վկայական, օրդեր, պայմանագիր, դատարանի վճիռ, սեփականատիրոջ, վարձակալի և չափահաս անդամների համաձայնություն՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ հաստատված կարգով):

(հավելվածը խմբ., լրաց. 08.07.10 N 842-Ն, լրաց. 15.11.12 N 1435-Ն, փոփ. 29.09.16 N 999-Ն, փոփ., լրաց. 22.11.18 N 1308-Ն)

Հայաստանի Հանրապետության
կառավարության աշխատակազմի
ղեկավար-նախարար **Մ. Թոփուզյան**

Հավելված N 5
ՀՀ կառավարության 2005 թվականի
հուլիսի 14-ի N 1231-Ն որոշման

Կ Ա Ր Գ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԲՆԱԿՎՈՂ՝ ՉՀԱՇՎԱՌՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՊԱՐՏԱԴԻՐ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՄԱՍԻՆ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆԸ ՏԵՂԵԿԱՑՆԵԼՈՒ

(հավելվածն ուժը կորցրել է 14.09.23 N 1576-Ն)

Հավելված N 6

Հավելված N 3
ՀՀ կառավարության 2005 թվականի
հուլիսի 14-ի N 1231-Ն որոշման

Կ Ա Ր Գ

ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐՈՒՄ ՀԱՇՎԱՌՎԱԾ ԱՆՁԻ ՄԱՀԻՑ ՀԵՏՈ ՏՎՅԱԼ ԱՆՁԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ԻՐԱՎԱԿԱՆ ՌԵԺԻՄԻ ՓՈՓՈԽՄԱՆ

1. Մահացած անձանց մասին ստացված տվյալների և բնակչության պետական ռեգիստրում առկա անհատական հաշվառման տվյալների համադրմամբ ռեգիստր են ներմուծվում հաշվառված անձի մահվան փաստը հավաստող փաստաթղթի տվյալները (համարը, տալու ամսաթիվը, տրամադրող մարմինը), դրանում նշված քաղաքացու անունը, հայրանունը, ազգանունը, ծննդյան օրը, ամիսը, տարեթիվը, ծննդավայրը, սեռը:

2. Բնակչության պետական ռեգիստրում առկա մահացած անձի անհատական հաշվառման տվյալներն արխիվացվում են կենտրոնական ռեգիստրում՝ անձի մահվան փաստը հավաստող փաստաթղթի տվյալները (համարը, տալու ամսաթիվը, տրամադրող մարմինը) մուտքագրելուց հետո՝ անմիջապես:

(2-րդ կետը խմբ. 22.11.18 N 1308-Ն)

3. Մահացած անձի անհատական հաշվառման տվյալները կարող են տրամադրվել միայն օրենքով սահմանված համապատասխան լիազորություններ ունեցող մարմիններին, ինչպես նաև մահացածի ժառանգներին:

(հավելվածը խմբ. 22.11.18 N 1308-Ն)

Հայաստանի Հանրապետության
կառավարության աշխատակազմի
ղեկավար-նախարար **Մ. Թոփուզյան**

Փոփոխման պատմություն

Փոփոխող ակտ	Համապատասխան ինկորպորացիան
14.09.2023, N 1576-Ն	24.09.2023, N 1231-Ն
25.06.2020, N 1052-Ն	01.07.2020, N 1231-Ն
22.11.2018, N 1308-Ն	15.12.2018, N 1231-Ն
29.09.2016, N 999-Ն	22.10.2016, N 1231-Ն
28.03.2013, N 307-Ն	11.04.2013, N 1231-Ն
15.11.2012, N 1435-Ն	08.12.2012, N 1231-Ն
22.03.2012, N 381-Ն	01.06.2012, N 1231-Ն
04.11.2010, N 1407-Ն	27.11.2010, N 1231-Ն
08.07.2010, N 842-Ն	31.07.2010, N 1231-Ն
23.11.2007, N 1389-Ն	22.12.2007, N 1231-Ն
01.06.2006, N 744-Ն	01.07.2006, N 1231-Ն

Փոփոխված ակտ

Փոփոխող ակտ	Համապատասխան ինկորպորացիան